1008

Դու եկար աշխարհ որպես մեր լույս
Դու եկար աշխարհ որպես մեր Փրկիչ Հիսուս
Քո լույսով մեզ լույս տալու Քո խոսքով մեզ փոխելու
Զորությամբ բժշկելու Քո կյանքով մեզ կյանք տալու:

Հիսուս վեր ամեն անունից
Քրիստոս կենդանի Աստծո Որդի
Փրկիչ, Իշխան, Թագավոր
Տերերի Տեր ամենից վեր
Հիսուս Քրիստոս:

Քո սիրո դիմաց տեսար հալածանք Դու
Պատասխան Դո գործերի անարգանք ու սուտ
Բայց երբեք չընդիմացար ու խաչի վրա գամված
Մեզ համար Դու զոհվեցիր Քո արյամբ մեզ գնեցիր:

Հիսուս վեր ամեն անունից
Քրիստոս կենդանի Աստծո Որդի
Փրկիչ, Իշխան, Թագավոր
Տերերի Տեր ամենից վեր
Հիսուս Քրիստոս:

Ինձ համար, քեզ համար
Բեթլեհեմի վրա փայլեց աստղը պայծառ
Վկայելու, որ Հիսուս եկավ աշխարհ՝
Փրկելու ամենին, ով Նրան կհավատա:

Աստծո Որդին թողած փառքերն երկնի
Մեզ պես հագավ մարմին,
Որ մեզ երկինք տանի
Մեզ համար այլևս չկա պատվար
Տեր Հիսուսն խաչով բացեց երկնի ճանապարհ:

Դեպի սիրող մեզ սպասող
Մեր սուրբ Հայրն: